Թողէք ի սրտից ձերոց զՀեռ և զնախանձն, որք ապականեն զՀոգին, և իբրեւ ժանկ թունաւորեն մահաբեր հետեւանօք զամենայն բարի խորհուրդս սրտից մերոց և փոխանակ այնոցիկ յանձին կալարուք զառ ի միմեանց մեծարանս, ել և էջս առնելով ի պատուել զմիմեանս սիրով, որով բերկրի ի մեզ Աստուած։

Այլ քանզի առ ի ըստ Աստուծոյ օրինաց և տնօրէնութեանց ընթանալ և գործոց մերոց հաճոյականս առնելոյ Աստուծոյ հարկաւոր է գիտութիւն Աստուածային օրինաց, վասն որոյ պատուէր տամք մտադրութեամբ հոգ տանել, զի երկսեռի մանկունք ձեր լիցին ուսեալք և միտք նոցա լուսաւորեալ Աստուածային գիտութեամբ, քանզի ամենայն որ ինչ անհաճոյք գործեն ի մարդկանէ, տգիտութեան են արդիւնք, զի ո՛ ոք անմտաբար մխեսցէ զձեռս իւր ի հուր, մինչ դեռ գիտէ թէ այրող և կիզանուտ է բնութեամբ, և վնաս ի նմանէ ունի կրել։

Վասն որոյ խրատեմք զձեզ զամենեսին հայրաբար խնամք տանել դպրոցաց և բազմապատկել ըստ թուոյ մանկանց, զի ամենեցուն լիցի ուսանիլ և ամենեքին լիցին դաստիարակեալք, որ է պարծանք ձեր և գլխաւոր բարիք առ ի յԱստուծոյ արժանաւորեալ փառաւոր վարձատրութեան ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Մարդոյ, որոյ կամք են բարիս առնել որդւոց, այն է մեծագոյնն, եթէ զնա դաստիարակեսցէ և ջան ի գործ դիցէ լուսաւորել զմիտս նորա գիտութեամբ, զի գիտութիւնն և իմաստութիւնն պատուականագոյն են քան զոսկի և քան զականս պատուականս, վասն այնորիկ և ջանք մեր հայրական ընդ ամենայն տեղիս այն է միայն, զի հոգեւոր որդիք մեր լիցին ուսեալք, և յաղագս այսորիկ մի՛ խնայել ո՛չ երբէք զամենայն ինչս ձեր, զոր թողլոց էք ի ժառանգութիւն նոցա, ծախիցէք մտադրութեամբ ի նմին, գիտացեալ թէ այն իսկ է մեծ ժառանգութիւն որդւոց ի ծնողաց թողեալ ի նոսա։

Արդ՝ այսմ նախանձաւոր լերուք, ուսուցանել զորդիս ձեր, և մեք յամենայն ժամ մաղթեմք յԱստուծոյ զօրացուցանել զձեզ շնորհօք, և ահեցուցանել հոգեկան բարեմասնութեամբ, զի գիտացեալ և արարեալ զհաճոյս Աստուծոյ՝ փառաւոր լիջիք յԱստուած, օրհնեսցէ զձեզ Տէր որպէս զորդիսն Իսրայէլի, որք վաս-